կարէ յապաւիլ դիւրապէս։ Բայց այս չէ՛ այնքան փոյթ. այլ տակաւին դրամոյ խօսակցութիւնն ոչ բացորոշեցաւ՝ որում ես փափագիմ, զի կարող լինէի միանգամ զգիրքն ընդ դրամոցն յղել առ ձեզ։ (Աբանաս վրդ. և եպիսկոպոս առ Մելգոնեան, 1761 յունիսի 20. [Կ. Պոլիս]։

ՄԻԲ.

Զաստուածաբանին բանսն ես իմացայ մանաւանդ վասն երանացուցանելոյ զլուսահոգի հայրն մեր, որ վասն մեր իրաւի մեծ ինչ է, եթէ յաջողեսցի։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1761 օգոստ. 22. [Ս. Ղազար])։

ՄԼ.

Վասն ժամերգութեանց գրեանց, որք աստ յօրինին, ծանիր, զի շարունակ Հ. Վրթանէսն պարապեալ է յայն. և գործն ոչ է թեթև որպէս գիտես. մինչև ցայժմ ժամագիրք և շարականն եղեալ են ամենայն նօթայիւք. այժմ պարապի ի կազմութիւն տօնացուցին և ճաշոցին ի միասին ըստ ժամերգութեան մասին. և այնք ես մօտ են յեզերիլ. յետ սորա սկսանի զնոյն ճաշոցն ըստ պատարագի մասին որ ես փութով եզերի, զի ամենայն նօթայի պատկանեալքն նախ եղեալ են ի մասին ժամերգութեան և ի տօնացուցին...։ Իմացաք և զբան վիգարութեան քոյ, շնորհաւոր լիցի. ճարեցից ես անձն փոխանակ քոյ այդր, զի դու ազատեալ երթիցես ուղիղ դէպ ի ստամպօլ, բայց մի՛ միայնակ, զի ոչ վայելէ աստիճանիդ նորոյ, այլ տաց քեզ զերկու ընկերս, զՀ. Անտոնն մեծ ի գրագիր սրտապարար, և զՀ. Յովսէփն աւտիթօռ քեզ, և զթօմաճանն քեահեայ յաւելից ի վերայ երկուցն։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ, 1761 դեկտ. 5. [Ս. Ղազար])։

ՄԼԱ.

Վասն տպագրութեան յովսեպոսի գրքոյն (կարծեմ թէ գրեալ է իմ առ ձեզ) ծանիք, զի այն դադարեցաւ առ այժմս ի տպագրելոյ. և թէ տպագրեսցի ոչ ես տպագրի ձեռամբ մերոյ. և թէ յետ ժամանակաց աղաչանք ես լիցի. ես ոչ առնում յանձն. ուստի ուրախ լերուք, զի այն բեռն բարձաւ ի մէնջ։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1762 յունվ. 15. [Կ. Պոլիս])։

ՄԼԲ.

Յոյնք քաղաքիս հրամանաւ պետաց, իւրեանց եպիսկոպոս ընտրեցին, որ ձեռնադրելի է ի զանդայու ի սանթամաւրայի, և ի քեօրֆուի եպիսկոպոսաց յարքեպիսկոպոսութիւն ի վերայ նոցա. և զիւրոյ եպիսկոպոսութեան հաստատութիւնն առնլոց է ի ստամպօլու պատրիա[ր]գէ իւրեանց։ (Մելգոնեան առ Հ. Մկրտիչ Ամանեանց, 1762 յունվ. 23. [Ս. Ղազար])։

ՄԼԳ.

Սառաֆօղլու սարգիս վարդապետն, որ երկու ամ է՝ որ ի պալատու ժամն էր և անդ քարոզէր, փոխեցաւ անտի ի խալաթիայ ի ժամն լուսաւորչին կարգաւորմամբ պատրիարգին, բայց պալատցիք դժուարեալ ընդ այս՝ յարուցին աղմուկս ոչ սակաւս. ուստի և պատրիարքն զաւագ երիցու նոցա և զայլոց երկուց երիցանց զարգն տուեալ առաքեաց ի քիւրէկն. և ընդ այս այլ քահանայք և մեծամեծք պալատցոց զժգոհեալ սկսան խօսել պատրիարքին։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան. 1762 փետր. 1. [Կ. Պոլիս])։